

Հունվարի 11, 2021թ.

## Ռազմագերիների և գերևարված քաղաքացիական անձանց վերաբերյալ հրապարակումները և անձնական տվյալների պաշտպանությունը

### Կարծիք

Պատերազմի ընթացքում գերևարված, անհետ կորած ու զոհված անձանց վերաբերյալ բազմաթիվ լրատվական նյութեր են հրապարակվում տարբեր հարթակներում՝ ներառյալ համացանցում: Դրանցում պարբերաբար ներկայացվում են զոհվածների, գերևարվածների և անհետ կորածների անձնական տվյալներ, այդ թվում՝ լուսանկարներ ու տեսապատկերներ: Օրինակ, 15.12.2020թ. [www.sputnik.am](http://www.sputnik.am) լրատվական կայքը հրապարակել է «Մինչև պատերազմը մոլորված ու գերևարված Նարեկ Սարգսյանը վերադարձել է Հայաստան» վերնագրով [նյութ](#), որում ներկայացրել է գերու լուսանկարը այն տեսանյութից, որը տարածել էին ադրբեջանական աղբյուրները նրան գերևարելուց մի քանի օր անց: 16.12.2020թ.ին [www.armtimes.com](http://www.armtimes.com) լրատվական կայքը հրապարակել է «Սպասում եմ Արայիկիս տեսնեմ, գրկեմ» 1 տարուց ավել Ադրբեջանում պահվող հայ զինծառայողը Հայաստանում է» վերնագրով [նյութ](#), որում հարցազրույց տվող անձի լուսանկարի հետ միասին հրապարակվել է նաև նախկին ռազմագերու լուսանկարը, որը տարածել էին ադրբեջանական աղբյուրները նրան գերևարելուց անմիջապես հետո:

Թեև պատերազմի մասին լրատվությունը հասարակական մեծ հետաքրքրություն է ներկայացնում, և հանրությունն ունի դրանց վերաբերյալ տեղեկություններ ստանալու լեգիտիմ պահանջ, զինված հակամարտության մասնակցի, մասնավորապես, ռազմագերիների վերաբերյալ տեղեկատվությունը ՁԼՄ-ների կողմից չպետք է հանգեցնի անձի արժանապատվության ոտնահարմանը և անձնական կյանքի գաղտնիության խախտմանը: Պատերազմական գործողությունները, ռազմական բախումները կամ դրանց հետևանքները լուսաբանելիս լրագրողներն ունեն կարևոր առաքելություն. նրանք կարող են նպաստել հակամարտության խաղաղ կարգավորմանը՝ հանրությանը տրամադրելով անաչառ և օբյեկտիվ տեղեկատվություն: Երբեմն էլ լրագրողների հրապարակումներն օգնում են գտնել գերևարված անձին կամ պաշտպանել նրա իրավունքները: Այս առումով նրանց հարազատներն ունեն տեղեկատվություն ստանալու օրինական շահ: Այդուհանդերձ, նույնիսկ նման իրավաչափ նպատակները չեն ազատում լրագրողին տեղեկատվությունը տրամադրելիս այլոց իրավունքները և ազատությունները հարգելու պարտականությունից: Սա է հակամարտությունները լուսաբանելու առանձնահատուկ դժվարությունը՝

ցուցաբերել նրբանկատություն և տարածել ճշգրիտ, անաչառ ու պատասխանատու տեղեկատվություն:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ռազմագերիների մասին լրատվական նյութերը հաճախ տարածվում են նրանց անձնական տվյալների ու անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի անտեսմամբ: Թեև գերիների վերաբերյալ տեղեկատվությունը, որպես կանոն, ներկայացնում է հանրային մեծ հետաքրքրություն, դա չի նշանակում, որ լրագրողները ստանում են անվերապահ հնարավորություն օգտագործել ներկայում կամ նախկինում ռազմագերու կարգավիճակ ունեցող անձի լուսանկարները, տեսապատկերները, որոնք տարածվել են այլոց կողմից հանրամատչելի աղբյուրներում՝ հիմնականում բջջային հավելվածներում կամ սոցիալական ցանցերում: Նույնիսկ եթե նման բովանդակության տարածմամբ կամ վերարտադրմամբ լրագրողը հետապնդում է կոնկրետ հանրային շահ կամ այլոց օրինական շահ, որևէ մեկի անձնական տվյալն օգտագործելիս բոլոր դեպքերում պետք է ունենալ անձի համաձայնությունը, իսկ դրա ստացման անհնարինության դեպքում անձնական տվյալի տարածումը կարող է արդարացված լինել միայն հանրային շահից բխող անհրաժեշտությամբ՝ ըստ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի:

Հայրենադարձված որոշ ռազմագերիների մասին հրապարակումներում այս մոտեցումները պահպանվում են, երբ լրատվամիջոցներն, օրինակ, նրանց վերաբերյալ հրապարակումներում նրանց պատկերը [շղարշում են](#): Սակայն, անընդունելի է, երբ որոշ լրատվական նյութերում նախկին ռազմագերիները կամ գերու կարգավիճակում պահված քաղաքացիական անձինք անգամ հայրենադարձվելուց հետո շարունակում են պատկերվել Ադրբեջանի իշխանությունների կողմից նախկինում տարածված լուսանկարներով կամ նույնիսկ տեսանյութերով<sup>1</sup>, որոնցում անձը երևում է խոցելի, ընկճված վիճակում, երբ նա գտնվում էր փաստացի գերության մեջ՝ թշնամական միջավայրում:

Լրատվության նման եղանակն անթույլատրելի է, խախտում է անձի արժանապատվության նկատմամբ հարգանքը, նրա ու նրա հարազատների հոգեկան անձեռնմխելիության իրավունքը: Անհրաժեշտ ենք համարում նաև ընդգծել, որ հաճախ անձնական տվյալների օգտագործումը, այդ թվում՝ անունը, ազգանունը և բնակավայրը, պայմանավորված չէ հանրային հրատապ անհրաժեշտությամբ:

Միաժամանակ, եթե որևէ անձնական տվյալ հեշտությամբ հասանելի է հանրային տիրույթում, դա դեռ չի նշանակում, որ այն կարելի է անվերապահորեն օգտագործել լրատվական նյութերում: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ անձնական տվյալ է ցանկացած տեղեկություն, որով ուղղակի կամ անուղղակի նույնականացվում է անձը: Անձնական տվյալի մշակումը/օգտագործումը կարելի է միայն օրենքով ուղղակի նախատեսված դեպքում կամ եթե առկա է անձի համաձայնությունը: «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասից բխում է, որ առանց անձի համաձայնության

<sup>1</sup> Վկայակոչված լուսանկարը արվել է տեսապատկերից, որը տարածել էր Ադրբեջանական մի մասնավոր կայք էնթադրաբար պետական մարմինների տրամադրած տեղեկատվության հիման վրա:

անձնական տվյալների օգտագործմամբ լրատվություն կարելի է տարածել այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար:

Լրատվամիջոցներում և համացանցում տարածված ռազմագերիների պատկերով տեսանյութերն ու լուսանկարները կարող են առանց սահմանափակումների անորոշ ժամկետով մատչելի մնալ: Անձնական տվյալների ամբողջական դուրս բերումը համացանցից գրեթե անհնարին է՝ հատկապես հաշվի առնելով, որ մոռացված լինելու իրավունքն առայժմ որոշակիորեն կարգավորված է միայն ԵՄ անդամ պետություններում, այն էլ միայն Google.com որոնողական համակարգի առնչությամբ: Նման պայմաններում անձնական տվյալի տարածումը համացանցում կարող է անդառնալի հետևանք ունենալ նախկին ռազմագերիների վերասոցիալականացման համար, և յուրաքանչյուր հրապարակում կարող է հանգեցնել կրկնակի գոհականացման ինչպես նրանց, այնպես էլ նրանց հարազատների համար:

Հաճախ լրատվամիջոցները և լրագրողները առաջնորդվում են այն մտայնությամբ, որ եթե որևէ տվյալ արդեն հրապարակված է հանրային տիրույթում, դա տալիս է այդ տվյալը ազատորեն վերահրապարակելու, տարածելու ազատություն, քանի դեռ բարեխղճորեն վկայակոչվում է աղբյուրը: Խորհուրդը վերահաստատում է նախինում արտահայտած իր դիրքորոշումը, որ անձնական տվյալի յուրաքանչյուր նոր հրապարակում, այդ թվում նաև ժամանակակից թվային տեխնոլոգիաների միջոցով, օրինակ՝ տվյալներ «կիսվելու» (sharing), տեղադրելու (post), հիպերհղումների, նորությունների ազդեցատրների և այլ եղանակով, անձնական կյանքի կրկնակի միջամտություն է՝ անկախ դրա նախկինում հրապարակված լինելու հանգամանքից: Հետևաբար, վերահրապարակվող անձնական տվյալը պաշտպանված է նույնչափ, որչափ առաջին անգամ հրապարակվող անձնական տվյալը:

## **Տեղեկատվական վեճերի խորհուրդ**

**Շուշան Դոյդոյան** (Խորհրդի քարտուղար) - Ինֆորմացիայի ազատության  
կենտրոնի նախագահ

**Արա Ղազարյան** - «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի տնօրեն

**Բորիս Նավասարդյան** - Երևանի մամուլի ակումբի նախագահ

**Արամ Աբրահամյան** - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

**Աշոտ Մելիքյան** - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

**Օլգա Սաֆարյան** - Փաստաբան

**Դավիթ Սանդուխյան** - Փաստաբան